



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

36 ՐԻ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 21 ՆՈՅԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3899



ԱՊՐԵՆԻԱՆԻԱՆ ԿԸ ԲՐԵՆՈՒՄԱՆ... ու ի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Սրբեկէրի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալամիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

- Ազգային Տեսութիւն. Խորհրդանութեան ոգին. Երկրագործական գործիք. (Ա. Գ. ԱՍՏԻԿԵԱՆ): Գարոցատէր Տիկնանց ընկերութիւն. Բանաստեղծութիւն ամառային հանդիսին մէջ (Գ.Ա.ՍՊԱՐ Պ. ՆԷՄՅԻ): Ազգային պատմութիւն. Գ. (Վ.Ա.ԳՄԱՆ Կ. ԱՐՄ-ԼԱՆԵԱՆ): Առակ. Գայլ թղթատար. (Վ.Ա.ԶԱՆ Վ. ՊԱՐՅԻ-ԶԱՅՅԻ): Վէպ. Հոյաստանի բարբեր. Սեակ և Սոսուհ, Բերութեան ստիպաներ. (Գ. Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ): Քաղաքացիական լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 20 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱՉԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

Բերայի թաղային բարեօր կազմակերպութիւնը մտածել կուտայ մեզ թէ ազգային շահերն ո՞ր աստիճան կը վերնասուին Պոլսոյ թաղերուն եւ գաւառական քաղաքաց մէջ տիրող տեղական անձուկ եւ սահմանափակ ուղւոյ շարաչար կիրառումներէն: Արդարեւ կը տեսնենք մայրաքաղաքիս մէջ շատ թաղեր որք այնքան մտա կը գտնուին իրարու, այլ որոց հանրային գործունէութիւնն այնքան հեռու է իրարմէ. տեղային ետական ոգի մը կը ջլատէ ամեն գործեր եւ արգելք կը լինի ո՞ր է յառաջդիմութեան, եւ այն հաստատութիւնք, որք հաւաքական ոյժերով եւ միահաղոյն գործունէութեամբ կրնային դիւրաւ բարեօրել ու բարգաւաճիլ, կը յարատեւեն իրենց յուս կացութեան մէջ: Բերայի մէջ գոհութեամբ կը տեսնենք այս ազգա-

չէն ուղղութեան բարեբար օգուտներն. այլ դեռ ո՞րքան թաղեր կան մայրաքաղաքիս մէջ յորս խորականութեան ոգին կը տիրապետէ եւ խոչընդոտ կը լինի զարգացման. օրինակի համար, կարելի չէ՞ որ Գում-Գարուի եւ շրջակայ թաղից Թաղական Խորհուրդք միանալով աւելի ընդարձակ մղում մը տան կրթական գործին եւ այս կերպիւ զօրացեալ կեդրոնն իւր օգտաշատ ազդեցութիւնը տարածէ երբեք չորս թաղի վրայ միանգամայն: Միևնոյն դիտողութիւնները կրնանք ընել եւ Սկիւտարի համար ուր իւրաքանչիւրի թաղի ոյժերն առանձին գործելով, ամուլ կը մնան:

Պոլիսէն անցնելով Անատոլուի եւ Բուսնէի հայ քաղաքաց, կը տեսնենք այս խորականութեան ոգւոյն շատ աւելի մեծ միասնեւրը: Պոլսոյ մէջ մըտքովն աւելի տարբարակութեամբ նաան այնքան ծանր չէ բաղդատարմը. այլ գաւառաց մէջ, ուր կը բերը շատ աւելի խիստ են, տղիտութիւնն ու նախապաշարմունք առաւել ընդհանուր, ետականութեան ոգին մեծապէս կը մնասէ հանրութեան լաւագոյն շահերուն: Գրեթէ ամեն հայ քաղաքաց մէջ իւրաքանչիւր թաղ ունի իւր առանձին եկեղեցին ու թաղական Խորհուրդն, Հետեւանքը դիւրին է գուշակել: Իւրաքանչիւր թաղի մէջ գրծտութիւնք, յուզմունք, խռովութիւնք անպակաս են միշտ. վարժարանները կը փակուին, եւ հայ ուսանողն առաջինը կը լինի այս պարսաւելի դրութեան միասնուող. առաջնորդական տաղանայներ կը ծագին, որով հանրային շահուց պաշտպանութիւնը բոլորովին երեսի վրայ կը մնայ. մատնութիւնք կը լինին, որոց զօհերն ընդունայն կը միասունին բարոյապէս եւ նիւթապէս:

Ազգային յառաջդիմութեան ի՞նչ զօրաւոր խթան մը տուած կը լինէինք եթէ բառնայինք այս տեղական գձուձ նկատումներն, և եթէ մէն մի թաղ իւր հաւաքական միջոցներով ոյժ տար ընդհանուր թաղ. Խորհրդոյ մը որ իր վերին տեսչութիւնը տարածէր բոլոր եկեղեցեաց ու թաղերու վրայ, որ իւր ձեռաց մէջ ունենար բոլոր ելեւմուտքն և որ այսու կարենար պատկառելի զօրութիւն մը լինիլ ի մի բերելով բոլոր ցրուած ոյժերը:

Եզրակացնելով կըսենք թէ մեր յառաջդիմական ձգտմանց ջլատման գլխաւոր պատճառներէն մին է, — եթէ ոչ ամենէն գլխաւորը, — խրտրականութեան ոգին: Բառնանք զայն մէջտեղէն: Ազգ. կեդր. նորընտիր Վարչութիւնն, ուսկից շատ բան կ'սպասենք ազգային գործոց բարեօրման համար, վստահ ենք թէ իւր լուրջընկատողութեան առարկայ պիտի ընէ զայս կենսական խնդիր և ծրագիր մը պիտի պատրաստէ թէ՛ մայրաքաղաքիս թաղերուն և թէ՛ գաւառական քաղաքաց նկատմամբ, վերջ տալու համար դրութեան մը որուն գոյութիւնը ցաւ կը պատճառէ ամէն զգայուն Հայու:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Ընդհանրապէս Թուրքիոյ երկրագործ կամ ամբողջ հասարակութիւնն յոյժ տարօրինակ գաղափար մը ունին Եւրոպիոյ մանաւանդ Ամերիկայի երկրագործութեան վրայ, իբր թէ լուսաւորեալ ազգեր, փարուցանի մէջ, գերազոյն հանճարներ ունին որոցմէ մեր երկրագործք բոլորովին գուրկ են: Յայտնի է թէ մենք խիստ շատ ետ մնացած ենք սոցն կենսատու արուեստին մէջ Ամերիկացիներէն, սակայն սա ալ ճշմարիտ է թէ յետընթացութիւնը չէ թէ բուն երկրագործի հանճարին պակասութիւնն է, այլ եւ մեքենագործին նուազութիւնն:

Ընդհանուր Թուրքիա հող մը ունի որոյ վրայ ամէն Եւրոպացի ճամբորդ, թէ՛ արհեստէն հասկցող և թէ ոչ, սքանչացմամբ կը խօսի: Բաղմութիւ հեղինակներ իւրեանց գլխաւոր օրինակները կ'առնեն Թուրքիոյ հողէն եւ պտուղներէն, եւ նոյնպէս մեր երկրի այս ինչ կամ այն ինչ գաւառները միշտ օրինակ են սքանչելի պտղաբերութեան:

Նոքա որք անձամբ այս մտոյն կրնան բաղդատութիւն մը ընել, գիտեն թէ մեր հողը, մեր ունեցած բնական միջոցներն եւ մեր երկրագործաց ժառանգական կամ յաւելտաւորական ուսումը սոյն արհեստի սկզբանց վրայ, շատ աւելի ընտիր եւ գերագոյն է քան Ամերիկացւոցն: Ենթադրենք. առ այսօր Միացեալ Նահանգաց երկրագործաց ձեռքն բոլոր մեքենայք, տուր մեր Նոյէն մնացած խոփն, արօրն ու մանգաղը, գոցէ բոլոր գործարանք — երկրագործական գործեաց, — զրկէ մեր վաղէօք երկաթագործք որ գործիք չին են, խափանէ երկրի հարիւրէն աւելի այս արհեստին վերաբերեալ լը-

րագիրը, գոցէ բոլոր երկրագործական զբաղ-
րոցը եւ արտօրէ բրօքէտը եւ վարժա-
պետը ի Թուրքիա, եւ պիտի տեսնես սորա
ակներեւ հետեւանքն, այսինքն որ Ամերի-
կացի երկրագործը պիտի սկսին գաղթել
այլուր:

Աւստի բանի որ անանկ միջոցներով կ'ապ-
ըինք, յորում այսօր մեզմէ գերազանց սե-
պուածը սովալուկ կը լինի, արդեօք չ'ար-
ժէր որ շարժինք, վստահ լինելով թէ մէկ
չարժում բերապատիկ արդիւնք պիտի ար-
տադրէ անտարակոյս եւ հաստատ:

« Երկիրն աղքատացաւ, օր ըստ օրէ. չը-
քաւորութեան կ'երթանք, քեօք է, առեւ-
տուր չը կայ » եւ, մեր ժողովրդեան սովո-
րական աւուր պատշաճի խօսակցութիւնն
է. լա՛ւ, եթէ կ'աղքատանանք, չէ՞ որ պէտք
է աւելի ուշադրութիւն տանք հողին որմէ
ընդ միշտ կուգայ մեր կենսական ասրուս-
տըն: Եթէ առուտուր չը կայ, բարեկամս,
ինչո՞ւ գրամագլուխդ այնպիսի վիճակի մէջ
դրած ես յորում հեղգ կենօք եւ սրտմա-
շուք խորհրդօք անգին ժամերդ կ'անցու-
նես, չէ թէ ուժոյ տէր այր, այլ եւ իբր
պահապան արդէն ունեցածիդ: Երբ տուր
գրամագլուխդ հողի եւ գործեաց, զնէ ըն-
տանի անասուններ, գնա դաշտի մաքուր
օդին եւ խաղաղ կենաց մէջ գործէ ժրա-
ջան, զի հողն հարիւրաւոր արդիւնք կու-
տայ իւր վրայ թափուած քրտեան փոխա-
րէն: Թուրքիա անմշակ հող շատ ունի եւ
հետեւագէտ միշտ կը կարօտի խելացի մը-
շակներու որք գիտեն թէ իրենց քրտինքն
ինչպէս թափելու են. բայց թողունք սոյն
անօգուտ հրաւերները մինչեւ որ օրը ճըշ-
մարտութիւնն երեւան հանէ եւ դառնանք
ուս. նի. Թ. հն. սուսինքն գործեաց:

Ինչ գործիքն Ամերիկայէն բերել տալ մտա-
դիր եմ, բայց լրածիս նայելով, կ'ըսեն թէ
եթէ կտարի շինող չ'ըլլար »: Ասի գլխովին
սխալ գաղափար մըն է, զի սոյն գործիք
շատ սղարգ են բազմատմամբ ուրիշ մեքե-
նայից, այնպէս որ Թուրքիոյ երկաթա-
գործք չէ թէ միայն կտորածը կը շինեն,
այլ եւ անգամ մը տեսնելէ եւ գործածու-
թիւնը սորվելէ վերջ բուն իսկ իրականն
ալ շինեմունտ տարակոյս չ'ունիմ, թէ եւ եր-
կար եւ ծանր աշխատութեամբ, բայց հոգ
չէ, զի մեր գաւառներն աշխատանք եւ ժա-
մանակ աժան են, շատ վար իրենց գէթ
բնական վարձէն:

Ինչի Գարբերդցի եւ երկար օտեն Սե-
բաստիա կեցած լինելով, այն երկու գա-
ւառները խիստ լաւ գիտեմ. առանց չա-
փազանցած լինելու կ'ըսեմ, եթէ այսօր
Գարբերդու բազմամարդ եւ բերրի գա-
ւառն երեք հազար ոսկիի Ամերիկեան գոր-
ծիք ներմուծուի, այժմու երկրագործաց
եթէ ոչ 70% առ նուազն 50ն անգործ
կը մնան բոլորովին, եւ պատրաստ նոյնչափ
արժողութեամբ գործիքներով ամայի դաշտ
մը Գարբերդու չափ պտղատու ընել, նոյն-
պէս նաեւ Սեբաստիոյ եւ ամէն գաւառք
Թուրքիոյ: Թերեւս եւ ի հարկէ ալ ըն-
թերցողաց շատերը « չափազանցութիւն »
ըսեն, ուստի եւ օրինակաւ բացատրենք
ընդհանուր, պայմանաւ որ յաջորդաբար
Մասիի ընթերցողաց ծանօթացնեմ սորա
ճշմարտութիւնն:

Ենթադրենք գիւղ մը հարիւր տնէ բազ-
կացեալ, երկու հարիւր ուժակարող ա-
բարք, թողլով կանայք եւ մանկունք որք
սովորաբար գլխաւոր օժանդակներ են մեր
երկրագործաց եւ առանց որոց, սրբա « կէս

ճամբան » կը մնան, եւ թէ այս գիւղացիք
բնաւ օգնութիւն չը վարձեն հնձոց ատեն
— բան մը որ գլխովին անկարելի է: Բաժ-
նենք այս երկու հարիւր անձինքն հինգ
մասի որոց հողերն իրարու կից են կամ
մօտ. կ'ունենանք ամէն բաժնի մէջ քառա-
սուն գործող մարդ: Սեպտեմբր թէ սրբա
առ առաւելն երկու հարիւր արտավար դե-
տին կը հնձեն (թէ եւ այժմու վիճակին մէջ
չեն կրնար ալ) տարուան մը մէջ 50-80
եզներով, 10-15 ձիով, սաշափ իշով եւ,
որք միջին հաշուով առ նուազն կը լինին
150 անասունք. ըսել է երկու հարիւր ար-
տավար (acre) գետին պտղաբերելու հա-
մար այժմ ունինք 40 մարդ, 150 անասունք
եւ շատ մըն ալ Նոյի գործիք. թող այս
մարդոց 30ը հիւանդանան ամբողջ տարին,
կամ թէ 40ը փոխենք 10ը մարդոց հետ
որք իրաւ կը գործեն օրը տասն ժամ կա-
նոնաւորապէս եւ ժրաջան, չէ՞ թէ կէս
ժամ գործեն եւ ժամ մըն ալ ծառոց շու-
քին ներքեւ պտուկած ծխեն եւ արդի աղ-
գաց վիճակը քննադատեն:

Հարիւր յիսուն անասունք աճուրդի հա-
նենք, յայտ է թէ առ նուազն 400 ոսկոյ
գումար մը կ'ունենանք: Լաւ, տանք այս
10 մարդոց 20 հատ կտորի՞ ձի 150 ոսկի
արժողութեամբ, ունեցանք տասն էրա-
երկրագործ, 20 ձի եւ 250 ոսկի ստակ.
այժմ տեսնենք թէ մեր հաւատարիմ մշակ-
ներուն սոյն գումարով ի՞նչ Ամերիկեան
գործիք կրնանք տալ: Ահաւասիկ.

- Ա. 15 հատ զոյգ խովի եւ մի խով արօր.
- Բ. 2 » ցանելու մեքենայ (Drill).
- Գ. 2 » քաղելու եւ խուրձ շինելու մե-
քենայ.
- Դ. 1 » Trashing Machine (մեքենայ

մաքուր կը վազցնէ տոպրակի մէջ առանց
բար, յարդ կամ մինչեւ իսկ փոշի մը թող-
լու մէջը):

Դեռ քիչ մը ստակ ալ կ'աւենայ մանր
գործեաց համար:

Այժմ զրկենք սրբա սոյն գործիքներով
հերկելու: Եթէ իրաւ Ամերիկացու պէս
ժրաջան գործեն, յիսուն ժամ կամ հինգ օր
վարելու եւ երեսուն ժամ կամ երեք օր ալ
Բ. մեքենայիք ցանելու եւ կանոնաւոր կեր-
պիւ սերմը ծածկելու կօդտէ: Քանի մ'ամ-
սուան դաղ ար տալենէս վերջ նորէն գոր-
ծի գնենք մեր հասարակ (որք եթէ իրաւ
հաւատարիմ են ո՛վ գիտէ այդ չորս ամ-
սուան մէջ, իրենց կտորի՞ ձիերով եւ ընտիր
խօփերով ո՛րչափ արտավար ամայի գետին
տակնուկոյ ըրին, ուրիշ բերքեր առնե-
լու, այդինքն անկեցին, անտաններ մշա-
կեցին եւ ըն) մշակներ, տալով այժմ վերջին
Գ. եւ Դ. մեքենայք, առնենք Գ. մեքենա-
յից հետ երեքական մարդ եւ հինգական
ձի, թողլով Դ. ի չորս մարդ եւ շատ մը ձիեր:
Տեսնենք ի՞նչ կ'ընեն: Երկու խուրձերն Գ.
մեքենայէն մէկ մէկ հատ առած արտերուն
մէջ են տարբեր տեղեր: Երկու ձի արդէն
մեքենային լծած են, մարդոց մին դաշտի
թագուհոյ պէս մեքենային ճակատն ար-
դէն բազմած է սանձն ի ձեռին, երկրորդը
ըմբ ի վեր պատրաստ է, ձիերն յամր կ'ըն-
թանան, գործը կ'սկսի: Մեքենան 4-8 ոտք
միջոց մը մեղմով կը կտրէ, կ'առնէ կտրածն
իւր մէջ կը կապէ՝ մէջն արդէն դուռած
չուանով, ահաւասիկ միւսը կը ժողվէ եւ
կը զիղէ խուրձերը, քիչ վերջն երրորդ մը-
շակինս ձիերէն մին կ'առնէ եւ կը փոխադրէ
խուրձերն այն կեղրունն ուր մեր չորս մար-
դը Դ. մեքենային կապակցած երկու ձի

(յետոյ կը բացատրենք թէ ինչու « կապա-
կցած » չէ թէ լծած) պատրաստ կ'սպասեն.
խուրձերու գալուն: Այժմ երկու Գ. մե-
քենայից գործած տեղէն խուրձերը կու-
զան, տեսնենք վերջինք ի՞նչ կ'ընեն: Մին
արդէն իւր սեպակական տեղը, մեքենային
ետեւը կայնած է, երկրորդը սուր դա-
նակ մը ի ձեռին կը կտրէ խուրձին շուանը
կուտայ առաջնայն, երրորդը հոսելի մը ի
ձեռին մեքենային ճակատն է իւր տեղը
ձիերը կը շարժին (եթէ պիտի երկու կամ
երեք ձիու զօրութեամբ շոգոյ մեքենա՝
մըն է մասնաւոր այս նպատակաւ շինուած՝
չոգին թող կը արուի.) խուրձերն երազ ե-
րազ կը արուին մեքենային, հատիկները
կ'սկսին վաղել աղբերց պէս հոն ուր արդէն
չորրորդը տօպրակները կառած է, մնացած
ցողունը լայն եւ բարձրացած տախտակա-
մածի մը վրայէն վար կը թափին զորս մեր
երրորդն աստ անդ կը ցրուէ եւ ուրիշ գոր-
ծեր կ'ընէ, Թերեւս լեցուած պարկերն համ-
բար կը տանի: Այսպէս կ'անցնի երկու շա-
բաթ, ամէն բան վերջացած է, արտերն
հնձուած, ցորենն ամբարն եւ մեր հաւա-
տարիմ մշակները պատրաստ են սկսելու
իւրեանց աշխան ցանելը:

Միւրիկ ընթերցող, ասիկայ ոչ թուաբա-
նական խնդիր է եւ ոչ ալ հանելուկ, այլ
բո եւ իմ գոյութեան չափ ճշմարիտ ի-
րողութիւն: Ո՛ր են մեր հիւանդ 30 հոգին,
ու՛ր են այն ճակագրի կամ Բրիտանի ըսուած
վարձու մշակաց ահագին խուրձն, ո՛ր են
անհամար եզանց-նախիրները, չը կան. զի
պէտք չեն: Ալ խելձ պատանիք եւ օրիորդք
արեւու կիզիչ ճառագայթից ներքեւ, չեն
նստիր ի ներքուստ գայլախաղ քարերով
տախտակ « կամ » երու վերայ՝ խթան ի ձե-
ռին ունու տարութեան առէն բերանին
փրկած խելձ եզներն: Ո՛ր են կանայք
որք մաս մը տունը ցորեկ եւ գիւղեր սպուր եւ
հաց կ'եփեն, իսկ ուրիշ մաս մը օրն ի բուն
էջերով ուտելիք կը կրեն. անթիւ ծախքերն
եւ անօգուտ վաստակներն այլ եւս նշանա-
կութիւն չունին: Մեր երկրագործ ընթեր-
ցողք (եթէ երբէք կան ընթերցողաց մէջ
երկրագործք որք կը կարգան լրագիր, զի
տաղտկալի եւ ծանր աշխատութեամբ հա-
նած բերքերին հազիւ եզներու, մշակնե-
րու, անպէտ ծախքերու, պահերու եւ իրենց
ձեռքէ ի բերան սպրեւու կ'օդտէ) աւելի
լաւ փորձառու են: Սոյն ենթադրութեան
կատարեալ իրողութիւն մը լինելը պիտի
ջանամ բացատրել, նկարագրելով Մասիի
էջերուն մէջ ամենայն մեքենայք որ այժմ
անհրաժեշտ են մեզ համար:

Գրել եւ աշխատիլ պարտքերնիս է, թէ
եւ նամակագիրը սոյն տողերը գրած ատեն
վստահ գիտէ թէ հայ երկրագործաց 1,000
էն հազիւ մի հատ անձամբ պիտի կարգայ,
թերեւս ոմանք սուրհանդակին հասած օրը
պահին տունը լինին, լսեն եւ երթան գեղի
ախոռներն այլ ընդ այլոյ տարածին: Թըշ-
ուառ կեանք, մինչդեռ երկրագործութիւն
պէտք է լինի ամենէն երջանիկ կեանք:

Ձեր գիրքը, սիրելի երկրագործք, մեծ է,
ձեր շրջանակէն դուրս ամեն մարդ ձեզ կը
նայի, խելացի եղիք, մի լինիք ստուկ,
պարտական եւ ընկճեալ, իշխեցէք մարդոց
վերայ, զի արժանի էք ձեր դառն աշխա-
տութեամբ, եթէ խելացի լինիք: Այլոց
զարգացումը ձեզի մեծամեծ զիւրութիւն-
ներ կուտայ, շարժեցէք, զի ձեր ասպագան
խիստ փայլուն է, անհոգ մի լինիք զի փե-
սան կուգայ ուստի հարսը պատրաստեցէք,
այսինքն ուշ կամ շատ երկաթուղին կը շին-

ուի, հողերնիդ պատրաստ ըրէք՝ շատ բեր-
քեր արտածելու, հարստանալու եւ այդ
անգուծ պաներէն զերծ մնալու, վստա-
գիտանալով թէ քիչ զարգացմամբ տասնա-
պատիկ աւելի արդիւնք պիտի հանէք այդ
սքանչելի հողերէն:

Արդեօք դոյզն եւ շնչին ծառայութիւն
մը մատուցած կ'ըլլամ սիրելի հայրենակից
թշուառ երկրագործաց, եթէ ըսեմ թէ միշտ
պատրաստ եմ այլ և այլ երկրագործական
մեքենայից վերայ տեղեկութիւն տալ ամեն
անոնց, ծանօթ թէ անծանօթ, որք կը փա-
փաքին տեղեկանալ այս մասին: Գրեցէք
պարզ եւ մանրամասն ինչ տեսակ մեքենայ
ուղեղնիդ եւ ինչ տեսակ հողի, կլիմայի եւ
բուսոց համար, արտերնուդ մեծութիւնն
եւ որչափ գործ ընող օրական մեքենայ մը,
եւ այլն. վստահ լինելով թէ ամենայն յօ-
ժարութեամբ եւ սիրով ուղածուող մի քա-
նի տեսակ պատկերները, բացատրութիւնք
եւ գործարանաց հասցէն կը զրկեմ, որ-
պէս զի ուզողը ինք անծամբ թղթակցի: Ա-
մերիկեան գործեաց վերայ տարօրինակ գա-
ղափար մի ունենաք, թէ և շատ սուղ են,
իրենց զիմացկունութեան բազմատմամբ
շատ ալ ավան են:

Եթէ մէկը կ'ուզէ ուրիշ երկրագործա-
կան բանի մը վերայ տեղեկանալ խիստ ու-
րախ պիտի լինիմ պատասխանել:

Ա. Գ. ԱՍՏԻԿԵԱՆ

Gornell University
Athaca N. Y. U. S. A.

ԳՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աւստիկ այն ըմբռնութիւն զոր Գասպար Էֆ.
Ղեմէ արտասանած է Գպրոցասեր Տիկնանց ընկե-
րութեան անցեալ շարժումն հանդիսին մէջ, ընկե-
րութեան ազգայնէն նպատակին և գործադրութեանց
վրայ:

Սրբազան Հայր

Տիկնայք եւ Տեարք

Ու՛մ փափագելի չէ մի քանի բառ ար-
տասանել այս հանդիսին մէջ, ուր դաս-
տիարակութեան տօնը կը կատարուի, լու-
սաւորութեան տօնը կ'օրհնուի, ուր՝ որպէս
գիտէք՝ Ազգին վարժուհիներ կ'ընծայուի:

Վարժուհիներ ընծայել, կը նշանակէ
առաքինի եւ իմաստուն մայրեր պատրաս-
տել, մայրեր՝ որք ծնողք պիտի ըլլան բա-
րեկիրթ ու յառաջողէմ Հայութեան, որք
ջանջախիչ ախոյեան պիտի հանդիսանան
ընդդէմ օտարամուլութեան եւ կոյր տգի-
տութեան:

Ապագէն, կիրթ ընտանիքն, այսինքն
բուն քաղաքակրթեան ընկերութիւնն եւ
հաւատարմորք Աւետարանի, եւ զինուորք
Յիսուսի, այսինքն հաւատարմութեան ու եղ-
բայութեան սրբուրք, յաւէտ ազատ ու
առաքինի, յաւէտ օրինակելի ու պանծալի
կը լինին:

Այս սկզբունքն որ Հռիփսիմեան Սանու-
հեաց մտատիպարն եղած էր, միեց զայնս
Գպրոցասեր ընկերութեան մը հիմունքը ձը-
գել, հիմունք, ոյր նշանաբանն է յառաջա-
գիտութիւնը՝ գիտութեամբ, քաղաքակրթու-
թիւնը՝ բարոյականի տիրապետութեամբ,
մեծութիւնը՝ ճարտարագիտութեամբ եւ
յաղթութիւնն՝ հանձարի գերազանցու-
թեամբ:

Առ այս հասնելու համար, հարկ էր վար-

ժարան մը բանալ ու լոյս ողողել, բարոյա-
կանն ու Քրիզթականն ուսուցանել, պարտ-
քըն եւ իրաւունքը ծանօթացնել, Հայ լե-
զուն ու հայ գրականութիւնը սիրելի ըն-
ծայել, Հայ կրօնքն ու հայրենիքը պաշտելի
առնել նոցա՝ որք պիտի կոչուին կրթական
առաքելուհոյ պաշտօնին, պաշտօն որ ան-
տարակոյս պիտի ազնուացնէ զհայութիւն
փրկարար աւելնով մը որ հոգեկան զօրու-
թեան կ'արձարծի. պաշտօն որ պիտի բա-
րեւորէ զՀայն իմացական լուսով մը որ
ճշմարիտ գիտութեան կը ծագի. պաշտօն
որ պիտի գայ վառել զՀայն ազգասիրական
խանդով մը, հայրենասիրական հրով մը, որք
առ հապա այս ուսումնասէր կուսանաց պը-
սակը պիտի գեղազարդեն, ու այս ապագայ
մարց փառքը պիտի յարգարեն:

Այլ միթէ նուա՞ք վստաք է եւ Ձեզ, ո՛
Գպրոցասէր Տիկնայք, դուք որ ապագային
ճակատագրի գերբուհները կը զիւրէք, ա-
պագային ոյր խանձարուրը կրնա՞ք սեպել
եւ ա՛յս յարկն ուր դաստիարակութիւնը
սիրաբարձ սրտերէ սիրագործ լինամ
կ'ընդունի, մտքեր կը կերտուին, ապա-
գային ոյր ներկայն կրնա՞ք սեպել եւ այս
մատուց սերունդն որ այս կրթութեան տա-
ճարէն, իմաստութեան այս յորդառատ ազ-
բերակէն իւր մտաց ծարաւը կը յագեցնէ,
այսինքն լոյս մը կ'առնու իւր անյարբի կա-
րողութիւնները զարթոցանելու, զօրու-
թիւն մը կ'զգենու եւ իւր խաւար հո-
գին ի լոյս ճշմարտութեան առաջնորդելու
համար:

Գործ, որքան նուիրական պաշտելի,
որքան երախտեաց արժանի. արգարեւ
բիւրեցս սիրալի է Ձեզ ո՛ Գպրոցասէր Հա-
յութիւն, տեսնել սրտով ու հոգեւով ճիշտ
ու խանդով, յոյժ զիզուն եւ յոյժ թափա-
ղուն խմբակ մը որ կուզայ հոյլ ի հոյլ եւ
բոյլ ի բոյլ ծիրանածիր ու բուրբաճիր շըր-
ջանակ մը յօրինել ձեր շուրջն, որ կուզայ
չնորձակալու սիրտ մը նուիրել ձեզ որ իւր-
եան բարոյական կենաց կլիան եւ մտաց ա-
զատութիւն խոյեանքը կազմաւորեցիք, նա
կուզայ այս՝ գուարթող էմ պահելով առ յա-
ւէտ իւր կրօնք ներքեւ հնոց մը անչէջ ե-
րախտեաց, վստարան մը անջինջ յիշատա-
կաց:

Այո, ա՛յս իսկ է ձեր վստքն, ա՛յս իսկ
է ձեր վարձատրութիւնն ո՛ Տիկնայք՝ ուս-
տի անխնայ եղիք ձեր աշխատութեան մէջ,
անվէհեր եղիք ձեր ընթացից մէջ, եւ միշտ
անձնուէր ձեր դատին, դատ՝ որոյ համար
Ժ. Սիմոն կ'ըսէ. «Հարկ է միլիոններ ծախ-
սել առանց ցաւելու, զի դպրոցք եւ մա-
տենադարանք, ժողովրդեան պալատներն
են»: Եւ յիրաւի այսպէս ալ է: Տիկնայք եւ
Տեարք, անդ՝ ուր մէն մի դպրոց որ կը
հաստատուի մի պալատ է որ կը կառու-
ցուի, պալատ մտաց ու սրտի, տաճար յա-
ռաջգիտութեան, յաղթանակ գիտութեան,
հանդիսարան քաղաքակրթութեան:

Վարժարանք ընդհանուր առմամբ յին-
քեանս ունին մանկան ոչ միայն սիրտն, այլ
եւ բանն որք ըստ Հիւկոյի կըսին երկու
թաթիկներն են: «Միթէ, կ'ըսէ մեծ բա-
նաստեղծը, զբանն ուսման մէջ եւ ահա՛
սիրտն յերկինս կը բարձրացնես»: Ուրեմն
կրնա՞ք ամենայն իրաւամբ ըսել թէ զըզ-
րոցասէր ընկերութիւնք մեր սիրտը, հա-
յուն սիրտը յերկինս կը բարձրացնեն, եւ
որ ինչ յերկինս կը բարձրանայ մեր ամե-
նէն փափուկ ու վէհ բանն է այն, այ-
սինքն զգացումն է, միտքն է, հոգին է
այն, այսինքն սրբութիւնն, անմեղութիւ-

նըն, անմահութիւնն է այն, ի մի բան
մարդ - սիրոյ Աստուած - սիրոյն ընդխառ-
նումն է այն:

Վարժարանք ազգաց փրկութեան, մար-
դոց ազատութեան խարխիսներ են. նա՛ որ
այս խարխիսաց կ'ապաւինի չ'երկնչիր ո՛չ փո-
թորկալից ժամանակէն, ոչ թշնամոյն սաղ-
բաներէն, զի գիտութիւնն որ այս խա-
րխիսին հոգին է, նորա կեանքն ապահո-
ված է ու նորա ապագայն երաշխաւորած
է. անմահ Լամադիինն ալ ի վկայութիւն
կը կոչեմ յայտ որ կը գրէ. «Dès qu'un
peuple ne sait plus ni chanter ni écrire
ni parler, il n'existe plus»:

Սրբազան Հայր

Տիկնայք եւ Տեարք

Հաւատացէք թէ, Գպրոցասիրոց վարժա-
րանին մէջ տեսած եմ որ կրօնը՝ գիտու-
թեան հետ, սէրը՝ ընկերաբանութեան հետ,
հայութիւնը մարդկութեան հետ ի միասին
կ'աւանդուին, անդ տեսած եմ որ աշա-
կերտուհին կ'սկսի զննել զընութիւն զմայրն
գիտութեան, զթանգարանն հրաշալից ու
հրաշալեաց ու պատկառ կը մնայ Աստու-
ծոյ մեծութեան, անդ աշակերտուհին կը
փորձէ ըմբռնել տիեզերին անձիբ ու ան-
պարագիբ տարածութիւնն, ու կը հաւա-
տայ անհնութեան ու գերագոյն յախտե-
նականութեան, եւ ի ծուներ խանարհելով
Որարչին, կենաց բանին առաջ որոյ դադու-
նեաց ու խորհրդոց միակ Աստուած է գի-
տակից, եղբարք:

Տիկնայք եւ Տեարք

Է՛հ, ցարդ խօսեցանք ընկերութեան
փայլուն կողմերը ցուց տայով, ցարդ չըզա-
էր, ինչ որ նախանձելին եւ պանծալին էր.
այլ դառնանք այդ լուսարփի վայրերէն եւ
թափանցենք ի խորս ալեծուփ ծոցին այս
յոգնավաստակ խմբին. դառն է արդ խոս-
տովանիլ իրողութիւնն, եւ միթէ ձեզ ալ
դառն չէ՞ բաղբաւել ընկերութեան նպա-
տակը գործառնութեանց հետ, շափել աշ-
խատութիւնն արդեանց հետ, համեմատել
այն մեծ ջանքն ու խնամքը տկար ու ցան-
ցառ նպաստից հետ: Սրբարեւ ցաւառիթ
է տեսնել որ ընկերութեան վսեմ, Ատե-
նապետին, այս գրագէտ որքան հայրենա-
գէտ, իմաստասէր որքան ընկերասէր Տի-
կին Տիւսաք փաշայի ժրջան գործունէու-
թիւնը, նմանապէս Գործ. Ժողովոյ Ատե-
նապետ Տիկին Փրնտըզլեանի յարաճուն ու
եռանդուն հոգածութիւնն, յաւել ի սմա
պարկեշտասուն ու գրչատուն կուսանաց
գովանի նոյնքան եւ օրինակելի անձնուի-
րութիւնքն հազիւ տարեկան երեք հարիւր
ոսկոյ մի գումար կը հայթայթեն ի պէտս
այն պիւսձէին որ ափսոս մեր ուսումնա-
սիրութեան աստիճանաշափը ցոյց կը տայ,
ի վեր հանելով Հայուն անտարբեր ողին եւ
օտարամուլութեան ձգտումն, որք ո՛չ միայն
աղետարեր են՝ հպատակ ազգաց, այլ եւ
մահարեր:

Ահա, Տեարք իմ եւ Տիկնայք, ինչպէս
հանապազօրեայ եղելութիւնք կ'ապացու-
ցանեն, մեզ դպրոցներ ու մայրեր պէտք
են, դպրոցներ ու մայրեր՝ երկու փարոս-
ներ ազգութեան ու մարդկութեան կենաց,
ուր դպրոցներ երջանկութեան եւ փրկու-
թեան գարագլուխ կը յօրինեն, ուր մայ-
րեր առաքինութեան եւ անձնուիրութեան
կենդանի օրինակներ կ'ընծայեն:
Չանանք, եղբարք, սիրել մեր վարժա-

մազրաց քի առթիւ ընտիր տեսութեանցը մէջ :

Վշտալի Մատթէոս կաթողիկոսն՝ 1862ին, եթէ չեմ սխալիր, ի Ճոաբաղ հանդիսի հըրատարակեց « Վաւերաբանութիւնն դաշանց թղթոյն », որ ի գիրս Ագաթանգեղեայ Ե. Ս. կաթողիկոսը խոստով էր Եաննապարեանի տեսութիւններէն եւ իրեն հետ պատկառելի ամիրայ մի եւս Եաննապարեան հրատարակեց իր « Հերքումն Գաշանց թղթոյն », որով հաստատուեալ տեսութեան այդ լարքն առաւելին տես դու հայ եկեղեցւոյ ոգին — Հովուապետն եկեղեցւոյս խոնարհեցաւ առաջի բնագառութեան, ճանչեց սխալն, զոր ի վեր կը հանէր մի վարդապետ . գուցէ ոչ այնչափ պատշաճ ձեւով իսկ — Յայնմ հետէ քննութիւնը գըննութիւնս գլեցին : Վենետիկ իսկ, 1865 թուին՝ Հ. Գարեգին Զ. ի Պատմութիւն Հայ Գաղութեանցի մէջ՝ գլխովին աղաւաղեալ նշանակելու պարտաւորեցաւ զԳաշանց թուղթն :

Այդ քննութիւնը անշուշտ պատրաստեցին զեղբարհացութիւնն որում յանգեցաւ Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան՝ որ Ս. Էմիանոսի տպարանէն հրատարակեց իր « Աթու Հայաստանեայց » գործովն թէ Ս. ԼՈՒՍՈՒՈՐԻՉ ՀՈՒՎՄ ՁԷ ԳՆԱՅԱԾ :

Ո՞վ կրնայ ընդունիլ թէ « Սոյնպէս եւ գհաւատան որ ի Գրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հոովմայ » հատուածն Եղիշէի՝ վասն Տրդատայ, չէ թշնամու յերբերում : Եւ եթէ մի բանաւէր յաղոյի լուծել զայդ առեղծոսած, շնորհակալութեան թէ պարտաւոր պէտք է սպասէ :

Արդեօք կը մեղանշե՞ր երբ ուկնդրենք առ Ս. Վ. Պարոնեան որ զՀայկական նընազարց զիւտի խնդիրն՝ կը քանայ կերպարանել նշանաւոր իրողութեանց շարք մը հետաքրքիր ընթերցողաց առաջի առնելով : Զայրանալ քննարարութեան նշանակէ թէ ոչ իբրբէնք ընդ մէջ սրտախեղ և ճշմարտութեան :

Վ.Ս.Ր.Ս.Ն. Կ. ԱՐՕՒ.ԱՆԵԱՆ

Ա Ռ Ա Կ

ԳՍՅՈՒ ԹՂԹԱՏԱՐ

- « Գայլուկ աղբար, է՞ր դու այդպէս Սոված մընաս, թղթիկ տամ քեզ . Տար սա ի գիւղ, ուր պիտի տան Եատ մը հաւեր գէր պատուական : Թղթիկս այս ֆէրման է, Արքունի հրաման է » :
- Աղուէս Գայլին զայս խօսեցաւ, Որ Գայլուկ հընազանդեցաւ : Բայց հազիւ թէ ի գիւղն հասաւ, Եանց փոշմակէ պաշարեցաւ : Յարձակումն յոյժ կատաղի էր, — Ո՞վ թուղթ ֆէրման մտիկ կ'անէր — : Բայց փառք բաղդին, Գայլուկ պրծաւ, Արիւնըւայ գարձաւ ըսաւ .
- « Խօսքը մեր մէջ, Աղբէր Աղուէս, Արքունական թղթիկդ աղէկ, Գիրն էլ այո՛ շատ սիրունիկիկ . Բայց հաւատա, թղթիկիւ լեզուէն Գիւղի այնքան տիրացուներէն Մէկը չը կար, Որ հասկանար » :
- Վ.Ա.ՀԱՆ. Վ.Գ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (13)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԲԵՐ)

Սիսակ սրտի տարօրինակ ուրախութեամբ մը կը գգուէ իր քոյրը . « Քո եղբայրն որքան երջանիկ է քեզ նման հրեշտակատիպ քոյր մ'ունենալուն, կ'ըսէ, ապրի՛ս, դու հազար ապրի՛ս, շուտ ըրէ՛ մեր ջորին բերել տուր, պաշարնիս վրան բեռնուր ու ճախայ երեսնք » :

Երկու վարկեան չանցած Սիսակի հըրացայտ Խանէն (այս էր իր ջորիի անուն) նոցա խզան (շիւղի) առջեւ կը խրխնջար ձայն բարձած : Գեղեցիկը Սոսունին ձայն կուտայ : Վարդ խաթունն իւր պատրաստած կերակուրներ եւ անուշեղէնք նմա կը յանձնէ որպէսզի իրենց բեռան մէջ ծրարէ . իսկ Սոսունին դառնալով « Աղջիկս շուտ հագուէ » կ'ըսէ :

Սոսունն իր պահետի զգեստեղինաց ծրարը բանալով՝ Բերիայի մէջ պատրաստուած մետաքսեայ կարմիր կերպասէ էնթարին (իրենց բառով շամին), Բաղէչի ընտիր շիւղայէն պատրաստուած կարմիր կտաւէն՝ չըջագգեստի ձեւ շապիկն ու կարմիր ասուէ չըջագգեստն (ձուպան) հագնելով, Պարսկաստանի ընտիր շալ գօտի մը մէջքը կ'ապելով իւր բարձեւ հասակ մոգական նոր ձեւ մը կ'զգեսնու . իւր իսկ շնորհալի մասներով ասեղնագործեալ մէզար (գոգնոց) վրան կ'ապած ու Բաղէչի կարմիր եւ զըզըւալի կոշիկներս հագած ուրախութիւն իւր սիրելի մօր ձեռքը կը համբուրէ եւ « Մայրիկ մնաս բարով » կ'ըսէ : Վարդ խաթունն որ իր դստեր վրայ անսահման սէր կը տածէր՝ այս անգամ զայն այդ կատարիչ հանգամանաց մէջ տեսնելով մայրական ամենամեծ սիրովը կը գգուէ իր սիրուն դստրիկ ու անհամար համոյրներ զրօշելով նորա զէմբին, ուրախութեան արտասուքով կը թռչէ անոր արծաթափայլ զլխարկն ու « Բարով երթաս, բարով գաս, Ս. Նարեկային տայ քո մուրառը » կ'ըսէ :

Սոսունն իր մօր այդ գորովալից խանդաղատումէն տեսուկ մ'եռանդ եւ յուզում գգալով իր սիրուն զէմբն հմայիչ փայլ մը կ'առնու եւ այդ սրտագրաւ երեւոյթի ներքեւ երբ կը մտնէ Սիսակի եւ Գեղեցիկի հիւղակը, նոցա խելք ու միտք կը վերնայ :

Բարով հազար բարով, պատերը գծեցէք կ'ըսէ Գեղեցիկ, ինչ քամի էր որ մոլորեցուց քո քոյրերը, կ'երեւի թէ տուն մտնելայ կ'ուզէիր : Ինչո՞ւ որ մը մեր տուն չէիր գար, ա՛խ պէ՞տքդ Սոսուն . . .

Հազար բարու մէջ մնաք . բայց ես ի՞նչ ընեմ, Սոսունած աւերէ քու մարդու տուն . թէ ո՛չ, զձեզ մոռցած չէ Սոսուն :

Սիսակն այս երկու տատրակաց խօսքերին մտիկ կ'ընէր ու Սոսունի յաւերժահարսական երեւոյթէն կը յախշտակուէր . . .

Գեղեցիկը՝ նկատելով իւր եղբոր վիճակըն : Օ՛ն ոտքի ելնէնք ու զնանք կ'ըսէ, Ժամանակն ուշ է :

Արդէն գիւղի միւս ուխտաւորները կ'ազմու պատրաստ էին . Սիսակի ընկերներն՝ որոնք իրենց շահատակութեամբ ծանօթ են, գրեթէ Սիսակի հրամանին կ'սպասեն : Երբ Սիսակն ու այն երկու տատրակն իրենց

բունէն դուրս կուգան, գեղեցիկ շարքով մը կը կազմուի ուխտաւորաց կարաւանն :

ԼԶ .

Ամառուան կիզիչ արեւն իւր ալգեցութիւնն այնպէս չէր ներգործած այդ լեռան հովասուն խաշնաբոյժների զուարթ բնութեանց վրայ, ինչպէս դաշտային մեղկ մըշակներին : Օրուան հասարակելէն առաջ սահող ժամերի գեղաժպիտ արեգական ճառագայթների հետ՝ Անտիտաւրոսի հսկայ լեռների հազար եւ մէկ օղակաց վրայ բողբոջած անտառներէն ու դալարներէն հոսող զուարթ հովը ճոճալով ու սողալով կուգար իր վափուկ թաթիկներով սեղմել այն ներքին տապն որ մտահոգութեան բեռ մը կը կապէր մեր սոխակաց :

Սիսակ՝ որ իր ընկերաց շրջանակի մէջ միշտ առաջին տեղը կը գրաւէր այս անգամ իր դիրքն աստիճան մը բարձր կը թուէր լինել : Քսանի մօտ կտրիճ երիտասարդներ հագուած ու թեքուած գեղջկական պարզութեամբ կը հետեւին իրեն. նոյնչափ ալ համեստ եւ գեղանի կոյսեր ու հարսներ կը խտտուտիէին այդ կարաւանի շղթան՝ ինչպէս աղանիներէ ու կաքաներէ խառն մի թռչնոց երամբ : Բոլորն էլ երիտասարդ ու ինչպէս կ'ըսեն, սրտերը զըւարթ : Ս.յդ զուարթ տղաւորութեամբ սրտագրաւ ու ներդաշնակ՝ ամենք միասին « Մոկաց գարնան » երգն եղանակել կ'ըսկըսին :

- Նանօ՛ր, նանօ՛ր նանանօր,
- Կիւլում ձան,
- Մոկաց գարուն էր եկեր,
- Կիւլում ձան,
- Կիւլում ձան,
- Պաղ աղբիւրներն էր բացվեր,
- Կիւլում ձան,
- Գարնան խաւքեր՝ ժողովեր,
- Կիւլում պան :
- Նանօ՛ր, նանօ՛ր նանանօ՛ր,
- Կիւլում ձան,
- Մեր կտրիճներն են եղեր,
- Կիւլում ձան,
- Գութան չորայք՝ կը սարքեն,
- Կիւլում ձան,
- Արտ ու ափներ կը հերկեն,
- Կիւլում ձան,
- Սրտու՞ն՝ ցորեն կը ցանեն,
- Կիւլում ձան :
- Նանօ՛ր, նանօ՛ր նանանօ՛ր,
- Կիւլում ձան,
- Մոկաց երկիր չէն ու նո՛ր,
- Կիւլում ձան,
- Փութիկն՝ ըան զմէն՝ զօրաւոր,
- Կիւլում ձան :
- Իր դուռ կուգան ըսթաւոր՝,
- Կիւլում ձան,
- Խաղարներով ձիաւոր,
- Կիւլում ձան :
- Նանօ՛ր, նանօ՛ր նանանօ՛ր,
- Կիւլում ձան,
- Մեռնիմ քեզի Սուրբ Գէորդ՝,
- Կիւլում ձան,
- Մոկաց երկրի դատաւոր,
- Կիւլում ձան,
- Քո աջն ու խաչ զօրաւոր,
- Կիւլում ձան,
- Պախէ՛՛ մեր երկիրն անխառն՝,
- Կիւլում ձան :

Նանօր, նանօր նանանօր,
 Կիւլում ճան,
 Մոկաց աշխարհն էր խորոտ¹⁰,
 Կիւլում ճան,
 Սիսոյի¹¹ թուրն¹² էր կօլոտ¹³,
 Կիւլում ճան,
 Երբ օր¹⁴ կանգնէր էնի օտ,
 Կիւլում ճան,
 Աշխարհ տնտէր¹⁵ էնօր¹⁶ մօտ,
 Կիւլում ճան:

Նանօր, նանօր նանանօր,
 Կիւլում ճան,
 Հաղար էրնեկ¹⁷ Միս մօր,
 Կիւլում ճան,
 Մէջքն էլ կանանչ էնօր խօր¹⁸,
 Կիւլում ճան,
 Երթանք երնեկ ի Սախոր¹⁹,
 Կիւլում ճան,
 Սիսօն էնեկ²⁰ մը՛խ²¹ քաւոր,
 Կիւլում ճան:

Նանօր, նանօր նանանօր,
 Կիւլում ճան,
 Քաւօր, քաւօր քե²² մատաղ,
 Կիւլում ճան,
 Իմ լաճ²³ տի տամ քե խոտաղ²⁴,
 Կիւլում ճան,
 Շանք տուր²⁵ իրեն խորտի (քաջի) տաղ,
 Կիւլում ճան,
 Տուչման չուտի ինօր հաղ,
 Կիւլում ճան:

Որքան հմայիչ էր տեսարանը՝ գոր բնութեան գեղաձիճաղ երեւոյթի հետ թռչնոց նուագներ ու ծաղկանց բոյրերը կը զուգորդէին այդ խորի չուին:

Կարկուտ ձորամէջի զուգահեռական լեհիմնեալ բոլոր գիւղերէն դուրս եկող ուխտաւորաց օժանդակներով տակաւ կը զօրանայ մեր այդ կարաւան:

Յաղթ գիւղ 10-15 տուն հայ բնակիչներով կը գտնուի Ռչտունիք, Մոկս եւ կարկառ գաւառներին անջրպետ բարձրացող «Յաղթագլուխ» լեռան շքնաղաքեղ սարատախի վրայ՝ Մոկաց բարձրայօն «Օղերով» կամ «Աղերով» սարի արեւմտահիւսիս՝ պատմական Նարեկու նշանաւոր վանքէն չորս ժամ հեռու դէպի հարաւ Կարկառի հիւսիսային մասի վերջին գիւղն է: Հոս մեր զուարթ կարաւան պահ մը հանգիստ առնելով՝ նորա շուրջ ու բոլոր պատող առատ արօտներով սնած ոչխարաց համեղ իւղով կաթով ու սերով իր ուժը կը զօրացնէ:

Երկար նստելու ժամանակ չը կայ կ'ըսէ Սիսակ. պէտք է շտապենք որ ժամանակը չը կորսնցնելով շուտ հասնինք ի վանք:

Կ'սխի քալել այդ զուարթ կարաւան՝ այնքան արագ եւ փութաջան սրբան բուռն այն տենչ ու փափաք որ կը ձգէ այդ միամիտ գառները առ մեր Նարեկացի Ս. Հօր վանք եւ նորա պաշտելի նշխարք:

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
 (Շարունակել)

1 թռչուններ. 2 չորս եղներէ բաղկացեալ լուծք. 3 ընտիր. 4 Փութ կի կամ Պուտիի Ս. Գէորգ վանք. 5 քան զամէն. 6 ուխտաւոր. 7 Գորոգ. 8 պահէ. 9 բոլոր. 10 գեղեցիկ. 11 Սիսակի. 12 սուր. 13 կարճ. 14 երբ որ. 15 թընդար. 16 անոր. 17 երանի. 18 հօր. 19 տեղի անուն. 20 ընեկ. 21 մեզի. 22 քեզ. 23 տըզան. 24 եղներ արածող. 25 ցոյց տուր:

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ

Նոյեմբ. 14 էն 20

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Նախարարական եւ նախագահական տաղնապն օրուան խառնուրդ խնդիրն է միշտ ի Ֆրանսա եւ կ'զբաղեցունէ քաղաքական աշխարհը:

Փարիզի քաղաք իրենց վերջին թըւով (27 նոյմ.) հետեւեալ զեկուցումն հըրատարակած են նախարարական տաղնապին վրայ.

«Նախարարք այս առաւօտ խորհրդակցեցան, Պ. Ռուվիէի նախագահութեան ներքեւ: Յետ այս խորհրդակցութեան, Նախարարք Պ. Ռուվիէ էլիզէ գնաց, եւ տեսակցեցաւ Հանրապետութեան Նախագահին հետ: Պ. Կրէվի բացարձակապէս ծանոյց Պ. Ռուվիէի թէ որչաժ է հրատարիլ եւ թէ առաջիկայ հինգշաբթի (նախընթաց օր) յայտարարութիւն մը պիտի դրկէ Մերակոյտի եւ Երեսփոխանական Ժողովոց նախագահներուն: Պ. Ռուվիէ, Պ. Կրէվիէ ստացած արտօնութեան համեմատ, միջօրէին Երեսփոխանական Ժողովոյ Նախագահ Պ. Ֆլօրէի մօտ գնաց Նախագահին որոշումները նմա հաղորդելու: Ըստ ամենայն հաւանականութեան, խորհրդարանէն պիտի խնդրուր յետաձգել իւր նիստեր մինչեւ հինգշաբթի, Պ. Կրէվիի հրատարման յայտարարութիւնն ընդունելու համար»:

—Նախագահական ընտրութեան մասին քիչ շատ համաձայնութիւն մը գոյացնելու համար, հանրապետական Երեսփոխանք եւ Մերակոյտի անդամք որոշեցին համադրամար նիստ մ'ընել ի Վերսայլ, Վեհաժողովոյ գումարուելիք օրուան առաւօտուն:

—Ահաւասիկ մինչեւ ուրբաթ իրիկուն Բարիզէն հասած հեռագիրք:

Աջակողմեան երեսփոխանաց զանազան խմբակները կը հաւաստեն թէ, նախագահական ընտրութեան բոլոր քուէարկութեան միջոցին, պիտի քուէարկեն Տոմբիէն տ'Օրնուա ծովակալին համար. հետեւաբար եթէ հանրապետականք բաժանեալ մնան Պ. աը Ֆրէսինէ եւ Պ. Ժիւլ Ֆէրրիի վրայը, բաղաժիւր քուէարկութիւնք հարկ պիտի լինին:

«Նախարարաց խորհրդոյ հինգշաբթի առաւօտեան գումարման մէջ, Հանրապետութեան Նախագահը ծանոյց նախարարաց թէ իրաց կացութիւնը փոխուած լինելով, ո'չ մէկ զեկուցում պիտի ընէր առ խորհրդարանն:

Պ. Ռուվիէ այսօր միջօրէէն յետոյ պիտի ծանուցանէ Երեսփոխանաց Ժողովոյն թէ նախարարութիւնը դարձեալ կը հրատարի:

Կը հաւաստեն թէ Հանրապետութեան Նախագահը նոր դահլիճ մը պիտի կազմէ:

—Նախընթաց շաբթուն ի Վարչախոս, զինուորական երեկոյթի մը առթիւ, հանրածանօթ Չօրաւար Կուրքօ, Բուլոնիոյ կուսակալը, բաժակ մը անաղարկելով սարայից, ըսաւ. «Ապահով եմ թէ քիչ տեսնէն վերջուտին ի պատերազմ պիտի առաջնորդեմ զձեզ, ինչպէս ասան տարի առաջ: Ամենակարողն Աստուած խիստ կարճատե կեանք մը տուած պիտի լինի ինձ, եթէ այդ նոր պատերազմը տեսնելու չհասնիմ»:

—Լուր կայ թէ Կուրքօ զօրավար ուսուցանակին սպարապետ պիտի անուանուի, եւ Շուվալօֆ Կոմս նմա պիտի յաջորդէ իբրեւ կուսակալ Բուլոնիոյ:

—Նայե Ֆրանսէ Բրէտէ կը ծանուցանէ թէ թուրքոյ եւ Ռուսիոյ միջեւ առեւտրական զաշնագրոյ մը կ'ընտան նպատակն է զօրացնել զՌուսիոյ Աւստրիոյ Հունգարիոյ դէմ մղած մաքսային պայքարին մէջ: Ռուսիոյ քանի որ իւր զուարը վաճառելու հրապարակ մը գտած է (գլուխքիս), աընտեսական ասպարէզին վրայ Աւստրիոյ Հունգարիոյ դէմ հակառակութիւնն աւելի հաստատապէս յառաջ պիտի կրնայ մղել:

—Ռայխսդակը միահամուռ որոշեց ցաւ յայտնել Վիլհէլմ Կայսեր եւ Քահաժառանգին՝ սորա հիւանդութեան համար:

—Պերլինի Փօք քաղաքը կ'ըսէ թէ Պ. Ժիւլ Կրէվի անկման ջերմապէս փափաքողներ խաղաղութեան բարեկամք չեն անշուշտ:

—Քրէյչ Չոյնի կը ծանուցանէ թէ Տըք. Շնէրլէն յաջողեր է գտնել միկրոպը կամ պասիլն, որ է պատճառ բաղձիւղային հիւանդութեանց:

—Հապէշաց Թագաւորը զիւր բանակեալ Տապրա Թապորէ յԱտոմա փոխադրեց, եւ կը խորհի դիմադրել Իտալացոց:

—Ֆրանսայի վերջին գայթակղութիւնք եւ քաղաքական տաղնապները շատ յուսաբեկութիւն պատճառեր են Ռուսիոյ մէջ, եւ նուազեցուցեր են Ֆրանսայի վրայ ուսական համակրանքներն:

—Ռուսիոյ յեղափոխական կուսակցութեան անգամ 18 սպայից դատաւտանը դեռ նոր մերժանաւ Բեքերապուրի մէջ: Չարն ալ դեռ նոր վերադարձաւ Կաչինայի ձմեռային պալատն, եւ Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ միջնորարը լի է Ոչնչականեորու եւ ուսանողներու ձերբակալման եւ գաղտնի տպագրական փամուռներու երևան հանման զրոյցներով: Նոյմ. 51 թուով Բեկերապուրիէ կը հեռագրուի թէ մայրաքաղաքին արուարձանաց մէջ 20 երիտասարդք ձերբակալուած են, որք գաղտնի տպարան մը կը բանեցնէին, եւ բուռն դիմադրութիւն ըրած են ոստիկանութեան, Բարձրագոյն կրթարանի մը ուսուցիչ բանի մը մանկամարդ տիկնայք եւս ձերբակալուեցան, այնպէս որ յեղափոխական ծաւալումն առաջուան շարք փութաջանութեամբ յառաջ տարուիլ կը թուի: Բարձրատիճանն ուս պաշտօնատար մը, որ տարիներէ հետէ պաշտօնին բնութեամբ կը հսկէ յեղափոխական շարժման վրայ, խոստովաներ է այս օրերս թէ ձերբակալութիւնք այնչափ շատցած են որ օրովան դէպքեր եղած են, եւ յատուկ ուշադրութիւն չեն գրաւեր այլ եւս:

Ն Ե Ր Ք Ի Ն

Բ. Գուսը վերջերս շրջաբերական մը ուղղելով մեծ Տէրութեանց քով գտնուող օսմ. դեպոսանաց, տեղեկութիւններ խնդրած էր Ռուսիոյ եւ Գերմանիոյ կայսերաց տեսակցութեան նպատակին եւ ելքին նըկատմամբ: Պերլինի եւ Բեքապուրիի դեսպանք զրկած են իրենց պատասխաններն, ուստից կ'երեւի թէ այդ տեսակցութեան մէջ ոչինչ որոշուած է ի մասին արեւելեան խնդրոյն: Երկուց կայսերաց տեսակցու-

Թեան արդիւնքը եղեր է ժամանակէ մ'ի վեր Բեղրսպուրի եւ Պերլինի արքունեաց միջեւ կեցած թիւրամացութեանց բարձու մըն : Սքանդու կ'ըսէ թէ օսմ . գետաւանաց այս տեղեկութիւնը յոյժ լաւ տպաւորութիւն ըրեր են ի Բ . Գուռն :

—Թարեք կ'իմանայ թէ սեղանաւորաց արհեստագետ թաղճեան Սարգիս էֆէնտի , երտական գործոց վրայ ընդարձակ ծրար գիր մը մատուցած է Բարձր . Մեծ-Նպարքոսին , որ նորա պարունակութիւնը գնահատելով , համակրալիք եւ գովասանական խօսքերով ծանուցեր է թէ Նախարարաց Խորհրդոյ ընտելեան պիտի ենթարկի :

—Նրկուշարթի օրը մայրաքաղաքս եկաւ Պառն Նիրը , մեծահարուստ արտօնատէրն Արեւելեան երկաթուղեաց :

—Մէլլուտի տօնը փառաւոր հանդիսի կատարուեցաւ կիւրակէ առաւօտ եւ այս առթիւ Վեհ . Սուլթանը զանազան պատուանշաններ ու աստիճաններ շնորհեց բարձրաստիճան պաշտօնատարաց ոմանց :

—Նինգ հազար զրուշ հանգստեան թուշակ յատկացուած է Պասրայի նախորդ կուսակալ շաճի Իզզէթ էֆէնտիի :

—Արեւ . Բուսիլէն Թուրքիա մտնող զինիներու համար ցարդ առնուած 100 ին ց մաքսատուրքը ընդուած է :

—Ներքին գործոց նախարարութիւնը ծանոց բոլոր գառառաց թէ Բէքիի վարչութեան եւ Կառավարութեան միջեւ եղած բանակցութեանց առթիւ արուած պաշտօնագիրը զրօյնամուտ չէ ազատ պիտի մնան . իսկ դատական գործոց յատուկ պաշտօնագիրը ըստ օրինի հարկ եղած դըրօյնութիւնը պիտի կրեն :

—Մէրսինի սպանիական փոխ-հիւպատոս Պ . Մալրիմաթի նոյն նաւահանգստի մէջ ունեցած մթերանոցներէն երկու հասն , որը 50,000 ըլիէ արմտիք կրնան պարունակել , ձրիաբար կայս . կառավարութեան տրամադրութեան ներքեւ դրած է : Այդ մթերանոցներու մէջ պիտի պահուին Վեհ . Սուլթանին կողմէ Գոնեայի սովետոց շնորհեալ արմտիքը մինչեւ որ անդ զրկուին :

—Բ . Գուռը նոր հրամաններ ուղղած է գաւառական իշխանութեանց՝ որպէս զի խտիւ հսկեն Աթէնքի լրագրաց Թուրքիա մտնելուն դէմ դրուած արգելքին գործադրման :

—Կայս . բժշկական վարժարանի վերատեսչութիւնը փոխանորդաբար պիտի վարէ Տօթթ . Սաիպ փաշա , ցապաքինուամ Մարքօ փաշայի որ հիւանդ է :

—Կը հաւաստեն թէ կայս . կառավարութեան եւ Օսմ . Պանքային ներկայացուցած դրամատեարց խմբին միջեւ վերջնական համաձայնութիւն գոյացեր է երկաթուղեաց միացման գծերու շահագործման համար :

—Ազրիանուպոլոյ մէջ հետեւեալ ոճբարգործութիւնը տեղի ունեցեր է .

Բանդէճի անուն յոյն փաստաբանի մը աղջկան ամուսնութիւնը կը կատարուէր , երբ նոյն թաղը բնակող երկու երիտասարդներ հարսանեաց տունը մտնելով զինի ուղեցին խմելու համար : Մինչ տնեցիք կը մեծարէին զանոնք , երիտասարդաց մին Բանդէճիի մօտենալով զաղջկնի հարուած մը մկեց ձախ կուրծքին : Խեղճ մարդը մեռաւ նոյն փամայն :

Ոճրագործն ու ընկերը ձերբակալուած են :

—Քաղաքապետ Մազհար փաշա երկուշարթէ ի վեր հիւանդ լինելով անկողնոյ կը ծառայէ :

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն

Պատրիարքական Փոխանորդ Գեր . Գէորդ Մ . վարդապետ Իւթիւճեան՝ ընկերակցութեամբ գործակատար Մեծ . Աբրահամ էֆէնտի Ֆրէնկեանի՝ շարթ օրը Բ . Գուռն երթալով ներկայացաւ Բարձր . Մեծ-Նպարքոսին և պատմելով Ազգ . Պատրիարքարանի անկերպարան վիճակը , խնդրեց որ Ն . Բարձրութիւն շնորհ ընէ փութացնել այն տնօրինութիւններ զորս խոստացած էր եկեղեցական պատգամաւորութեան , Փոխանորդ Հայրն յայտնեց թէ միայն Արօնական Ժողովը կայ՝ կրօնական խնդիրները տնօրինելու համար . իսկ Քաղաքական Ժողովոյ վերաբերեալ խնդիրներ հետզհետէ կը գրուին և շուարում կը պատճառեն իրեն :

Բարձր . Քեամիլ փաշա յոյժ սիրալիք կերպիւ ընդունելով զՆ . Գերապատուութիւն , յայտարարեց թէ երկուշարթի պէտք եղած յանձնարարութիւնը պիտի ընէ Բարձր . Արիֆի փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովին որպէս զի անմիջապէս գործի ձեռնարկէ : Մեծ-Նպարքոսն յանձնարարեց Փոխանորդ Հօր որ իւր յատուկ բարեւներն հաղորդէ Ամեն . Տ . Յարութիւն Ս . Պատրիարքին և ցաւակցութիւնն յայտնէ նորա հիւանդութեան առթիւ :

Գեր . Փոխանորդ Հայրը շնորհակալութիւն յայտնելով մեկնեցաւ եւ յետոյ այցելութիւն տուաւ նաեւ Վսեմ . Պէյլիկճի պէյին :

— Ազգ . Պատրիարքարանի ծանուցեալ խնդրոց ընտելեան համար Բարձր . Արիֆի փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովոյ անդամ են Արթական նախարար Վսեմ . Միւնիֆ փաշա , Վսեմ . Պէյլիկճի պէյ եւ Գատական նախարարութեան խորհրդական Վսեմ . Վահան էֆէնտի :

Կը լսենք թէ յանձնաժողովը իւր նըպատաւոր տեղեկագիրը պիտի մատուցանէ նախարարաց խորհրդոյ յառաջիկայ նըստին :

—Պրուսայի Առաջնորդ Գեր . Բարթոլոմէոս եպիսկոպոսի եւ տեղւոյն գաւառաժողովոյ զիւսնին կողմէ ստորագրեալ գիր մը՝ ուղղեալ առ Ամեն . Ս . Պատրիարք Հայրն՝ ցաւ կը յայտնէ Ն . Ամենապատուութեան հրաժարականին համար եւ կը խընդրէ շարունակել զիւր պաշտօն :

Նոյնիմաստ հեռագիր մ'եւս հասած է Եւգոնիայէ ինչպէս նաեւ այլ եւ այլ գաւառներէ :

—Քաղաքի առաջնորդական տեղապահ Շիւսանեան Գեր . Ղեւոնդ Եպիսկոպոս հեռագրով մ'ուղղեալ Ազգ . Պատրիարքարանի կրկին անգամ հրաժարած է իւր պաշտօնէն եւ խնդրած է որ ուրիշ եկեղեցական մը զրկուի իւր պաշտօնը նմա յանձնելու համար :

—Ռումանիոյ Թրիօնա քաղաքի Հոգաբարձութեան եւ ազգայնոց կողմէ ի Պատրիարքարան հասած գիր մը կը ծանուցանէ թէ տեղւոյն Մոսկոֆեան Տ . Խաչատուր քահանայն Ժողովուրդն անհովիւ թողով Պուքրէլ մեկներ է , անդ քահանայագործե-

լու համար : Այս գիր յանձնուեցաւ Արօնական Ժողովոյ : Միւս կողմէ , Պատրիարքական Գեր . Փոխանորդ Հայրն յիշեալ քահանայէն բացատրութիւն պահանջեց իւր այս ընթացքին համար որ մեծապէս գայթակղեցուցած է տեղւոյն Ժողովուրդը :

—Պաշտալէի առաջնորդական տեղապահ Մոկացեան Արթ . Մեսրոպ վարդապետ հըրաժարական զրկած լինելով , Արօնական Ժողովը գրեց առ Գեր . Առաջնորդական Տեղապահն Վանայ՝ Գրիգորիս Եպիսկոպոս , որ Պաշտալէի տեղապահական պաշտօնին յարմար ընտրելի մը ցոյց տայ եւ միւս կողմէ յանձնարարեց Մոկացեան վարդապետին որ շարունակէ իր պաշտօնը ցընտրութիւն իւր յաջորդին :

—Բարիզէ կը գրեն թէ հանգանակութիւն մը սկսեր է անդ՝ փառաւոր չիրիմ մը կանգնելու համար բարեյիշատակ Վըսեմ . Օտեան էֆէնտիի . Ելրարք Անդրանիկ և Գարրիէլ էֆէնտիք Էգնայեան 1,000 Փրանք տուած են , իւրաքանչիւրն 500 ալիւն Փրանք ստորագրելով , Պետրոս էֆ Աիւզէլ 500 Փրանք տուած է և ուրիշ անձինք ալ այլ և այլ գումարներ ստորագրած են արդէն : Զանազան տեղեր ալ հանգանակութիւններ պիտի բացուին այդ չիրիմի կառուցման համար :

—Վեհ . Մակար Վաթողիկոսի փառաբանօք , Էջմիածնի Աբրահամ ամուսնուրն 1888 յունուարի 1 էն սկսեալ պիտի հրատարակուի հիմնովին բարեփոխեալ եւ ճօխացեալ : Խմբագրութիւնը պիտի յանձնուի դադարեալ Մեղս . Հայաստանի խմբագիր Պ . Պետրոս Սիմէոնեանի , եւ Հայոց գլխաւոր գրագէտներն ու Գէորգեան շեմարանի ուսուցիչներն աշխատակցութեան պիտի կոչուին , իւրաքանչիւրի գրուածքը վարձատրելու պայմանաւ : Վեհ . Վաթողիկոսին տնօրինութեամբ , Էջմիածնի սուլթանի համար մասնաւոր չէնք մը պիտի կառուցուի՝ գործին յաջողութեան համար պահանջելու ամեն հանգամանքներով : Բաց աստի , Աբրահամի նոր խմբագրութեան իրաւունք պիտի արուի ազատօրէն օգտուիլ Էջմիածնայ հարուստ մատենադարանին տպագիր եւ ձեռագիր գործերէն :

—Զմիւռնիայէն բազմաթիւ հեռագրեր կը հասնին ի Պատրիարքարան , որք կը բողոքեն տեղւոյն ազգային գերեզմանատան ոսկերտեաց փոխագրութեան նկատմամբ Զմիւռնիոյ Առաջնորդարանին կողմէ տըրւած որոշման դէմ :

ԽԱՅԻՆ ՊԻՐ ԱՏԷՄ ՀԻՔԵԱՅԷԻ ՂԱՐԻՊԷ

ԷՍԵՐԸ

Յ . ԳՈՒՐԳՍԱՆ ՎԷ Մ . ՊԻՏԱՐԻ

Գուրպան Յովսէփի և Մ . Պիտարի էֆէնտիները՝ քաջալերուած այն ընդունելութենէն զոր գտած էր իրենց նախորդ վէպը « Իսկ Գաբո-Եօրու լուր » , ձեռնարկած են ներկայ հայատառ և թրքաբարբառ տեղական վէպի հեղինակութեան , որոյ առաջին հատորն ի լոյս ընծայուած է արդէն և կը գըտնուի ամեն գրավաճառաց քով :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

Հրատարակուեցաւ
ԸՆԴՍՐՉԱԿ
ՕՐԱՑՈՅՑ
1888

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՍԱՏԼԵԱՆ

Կը պարունակէ բաց ի տամարական գիտելիքներէ՝ յամանակագրութիւնը. — Աղիւսակ դրամոց գըլ-
խուրը սողաց. — Ամանուկը. — Անուանք Օսմ. կայ-
սերաց. — Աւագանի կայս. Պալատան. — Նախարարք
Բ. Դրան. — Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքին. —
Հրամանատարք բանակաց. — Պետական խորհուրդ. —
Արդարութեան և կրօն. գործոց նախարարութիւն.
— Մարտապետք. — Կուսակալք նախնեաց. — Պատ-
րիարքունք և Եղիպատք. — Օսմանեան դեսպանք.
— Գեապանք և Տիւրքապետք օտար տէրութեանց ի
կոստանդնուպոլիս. — Վիճակագրութիւն օսմանեան
կառավարութեան. — Հայ ազգի պաշտօնատարք և
ատիճանաւորք. — Հայրապետութիւն հայոց. — Եպիս-
կոպոստք. — Ազգ. կեդրոնական վարչութիւն. —
Յանձնաժողով. — Պաշտօնայք պատրիարքարանի. —
Առաջնորդութիւնք թուրքիոյ և թեմք. — Հովուու-
թիւնք. — Մայրավանք թուրքիոյ. — Թաղորայք և
Պոլսոյ. — Համագումար թաղորէից. — Բարեգործ. և
կրթ. հաստատութիւնք. — Առաջնորդութիւնք ի
Ռուսաստան և այլն. — Մայրավանք ի Ռուսաստան
և այլն. — Կայսերական գերդաստան Ռուսիոյ. — Հայ-
ագգի ատիճանաւորք. և պաշտօնատարք Ռուսա-
կան տէրութեան. — Նոյն, Պարսկական տէրութեան.
— Նոյն, այլ և այլ տէրութեանց. — Հռոմէական
հայ հասարակութիւն. — Բողոքական հայ հասարա-
կութիւն. — Յուդայական պաշտօնեից. — Գասա-
տուք պետական ուսումնարանաց. — Բժիշկ քաղաքա-
յին և զինուորական. — Փաստաբանք. — Արուեստա-
գէտք. — Լրագիրք. — Հեռագրութիւնք թուրքիոյ և
միջազգային. — Միջազգային թղթատարութիւն. — Եւ-
րոպական նամակատուէրք. — Յամաքային թղթ. սահա-
կան թուրքիոյ. — Օսմանականացոյց Օսմ. Միջ. թղթ.
— Ազգ. — Երանուցմունք.

Գինն է 3 դահեկան

Կեդրոնատեղին է Գ. Պաղտատլեան գը-
ատուն, Յակոբեան խան թիւ 13.

ՏՅԶԶ 1-8

ՏԱՐԵՑՈՅՑ ԽԻԿԱՐԻ
1888

Յ. Յ. ՊԱՒՈՆԵԱՆ

Կը պարունակէ Գաղամիա, զաւեշ-
տական Օրացոյց և զուարճալիք.

Գին 50 փարա

1319 3-5

ՌԻԶԵՆՈՐՈՒԹԻՒՆ

ՇՈՒՐՉ ԶԼՈՒՍՆՈՎ

Գին 8 զրուշ

Հոչակաւորն ժիւլ Վէրնի սոյն հետա-
քրքրաչարժ գործը գրեթէ շարունակու-
թիւնն է նոյն հեղինակին «Ռուսարութիւն»
յեղիքէ ի Լուսին անուն վէպին, որ արդէն
բանի մը տարի առաջ Մասիսի մէջ թարգ-

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐՆԵՔ ՀԵՏԵԻՒԱԼ, ՀՈՏՈՒՆՏ ՆԻԹԵՐԸ Eau de Cologne
Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար Ambrosial cream, օճառուտ քրէ՛ճ ամիւ-
ւոյ մարդու համար. Crème de Fraises մորթը կահուզնելու համար. Poudre de Cypris
լավացնելու և ձերմկնելու համար մորթը. Stilboïdeփայլ տալու համար մազերուն և մորու-
քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու և մաքրելու համար գլուխը. Alcoolat
de Cochlearia սկապնելու համար. Eau de Chypre արդուզարդի համար. Թաշինակի հա-
մար հոտաւէա նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-
rie Christine. Imperial Russe. 977 15-29

մանուած և մեծ ընդունելութիւն գտած էր :

Սոյն գործոյն մէջ կը պատմուի կըն-
Քիւպի Ռուսին Լուսնոյ բոլորաբը կատա-
րած ուղեւորութիւնն և ապա վերադարձն
յոյժ հետաքրքրաչարժ մանրամասնու-
թեամբ :

Կեդրոնատեղին է Պողաճեան գրատուն,
Չաքմազըլար-եօզուշ թիւ 56

1256 3-5

Վասն Արտօմատեան
Տնօրէն-Պատասխանատու
Ե. ՏԱՄԱՏԵՍԵՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՆԵԼԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԵՏԵՍՄ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ՄԵՏԵՍՄ-ՆԵՐՈՒՄԻՍ ՄԵՐՍՆՈՅ ԳՈՅՆԵՐ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ
կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, դժբ և աճու մը :
Գլխու թեփը շուտ մը անկելով իջնէ : Իր անուշ
հոտը առատ է ու հեշտալի :

“Մէկ շիշ կը բաւէ :” Եւր փորձը ունեցան
ամենքը որոնց մտրազ ունեւ մազերը իրենց բնական գըլ-
նին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :
“Կերկ չէ, և ամենեւին զեան մը չընէր : Թե՛ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր
կենացը մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ԳԼՔՆԻՍ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ Զամաշ-
խարհակն խալէ նորոգողն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք : Կը վաճառուի ամեն սահմաններու, անոյշ իւղա-
գործներու և անգղիացի գեղագործներու քով :



Կը գտնուի Ն. և Վ. Գանգիւր եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
փողոց, Իամբնա Բարուան, Անգլիական մթերանոց, Երեւէք Գալաքըրմ. և Իլի-
աօր Լազանաէլլա 435, Բերա Մեծ փողոց :

ՆԵՐՍԵՆԵԿԸՆ ԾԵՂԿԵՓՈՒՆԸ

ԳԵՂԵՑԿԱՆՈՒՆՈՂ ՄԵՐՍՆՈՅ ԳՈՅՆԵՐ, ՄԵՐՍ
ԾԵՂԿԵՓՈՒԹ, ՄԵՐՍ ԹԵՐՄ :

Ենթամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ
գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշի-
ներէ : Եւր չին անգամ գործածելովն ալ, որ բանի
մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ
երեսը, վեզը, թեւերը և ձեռքերը պիտի աւ-
նուն անոյշ փափկութիւն մը և մարմարիոնի
փայլ, հանդերձ շուշանի և վարդի գունով և
բուրմամբ : Սապոնի գրգռիչ յատկութիւնները
կը հանդարտեցունէ : Եւր հետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի և ձեռքի ցանցերը, արեւոյ-
րուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բժաւորութիւն : Եւ այս ամեն բանով անկարելի
կ'ընէ մամուռիլ թէ արհեստով գեղեցկացուած է :

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս
Բարիզ ու Նիու Եօրք : Կը վաճառուի սահմաններու, անոյշ իւղագործներու և
անգղիացի գեղագործներու քով :

Կը գտնուի Ն. և Վ. Գանգիւր եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
փողոց, Իամբնա Բարուան, Անգլիական մթերանոց, Երեւէք Գալաքըրմ. և Իլի-
աօր Լազանաէլլա 435, Բերա մեծ փողոց :



ՄԵՆԵՐՈՒՄ

ՄԵՆԵՐՈՒՄ ՄԵՐՍ ԶԵՐԿՆԻՆՈՒՄ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմկնած կամ գունաթափ
մազերը. կը դադրեցունէ անոնց թափելը. կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ
թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :
Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ :

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa lpton Row). Նոյնպէս
Բարիզ ու Նիու Եօրք :

Կը գտնուի Ն. և Վ. Գանգիւր եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
փողոց, Իամբնա Բարուան, Անգլիական մթերանոց, Երեւէք Գալաքըրմ. և Ի-
գիտօր Լազանաէլլա 435, Բերա Մեծ փողոց :